ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՍՆԴԻԿԻ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 23.03.2022

- Գլուխ 1 Ընդհանուր դրույթներ
- Գլուխ 2 Սնդիկի, սնդիկի միացությունների, սնդիկային թափոնների եւ սնդիկի հավելիչով արտադրանքի էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտում կառավարության եւ լիազոր մարմնի լիազորությունները
- Գլուխ 3 Սնդիկի գործածությունը, ներմուծումը, արտահանումը եւ սնդիկի գործածության մեջ ներգրավված անհատ ձեռնարկատերերի եւ իրավաբանական անձանց իրավունքները եւ պարտականությունները
- Գլուխ 4 Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան եւ նպատակը

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում սնդիկի, սնդիկի միացությունների, սնդիկային թափոնների եւ սնդիկի հավելիչով արտադրանքի գործածության հետ կապված հարաբերությունները, որի նպատակը մարդու առողջության եւ շրջակա միջավայրի պահպանությունն է սնդիկի եւ սնդիկի միացությունների մարդածին արտանետումներից եւ արտազատումներից:

Հոդված 2. Օրենքի կարգավորման ոլորտը եւ սահմանափակումները

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է սնդիկի, սնդիկի միացությունների, սնդիկային թափոնների եւ սնդիկի հավելիչով արտադրանքի գործածության վրա:

2. Սույն օրենքի գործողությունը չի տարածվում՝

1) լաբորատոր հետազոտություններում կամ որպես էտալոնային ստանդարտ օգտագործվող սնդիկի կամ սնդիկի միացությունների վրա.

2) սնդիկի կամ սնդիկի միացությունների բնական հետքային քանակների վրա, որոնք առկա են հանքաքարերում եւ այնպիսի արտադրանքներում, ինչպիսիք են ոչ սնդիկային մետաղները, հանքանյութերը, այդ թվում՝ ածուխը կամ այդ նյութերից առաջացող արտադրանքը եւ ոչ կանխամտածված հետքային քանակները քիմիական արտադրանքում:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

1) սնդիկ՝ տարրական սնդիկ (Hg(0), քիմիական նյութերի վերաբերյալ վերլուծական տեսությունների մշակման ծառայության համապատասխան համարը 7439-97-6):

Սույն օրենքի իմաստով՝ «սնդիկ» հասկացությունը վերաբերում է նաեւ սնդիկի խառնուրդներին այլ նյութերի հետ, այդ թվում՝ սնդիկի համաձուլվածքներին, որոնցում սնդիկի կոնցենտրացիան առնվազն 95 կշռային տոկոս է.

2) սնդիկի միացություններ՝ ցանկացած նյութ՝ բաղկացած սնդիկի ատոմներից եւ այլ քիմիական տարրերի մեկ կամ ավելի ատոմներից, որոնք կարելի է բաժանել տարբեր բաղադրիչների միայն քիմիական ռեակցիաների միջոցով:

Սույն օրենքի իմաստով՝ սնդիկի միացություններն են սնդիկի (I) քլորիդը (կալոմել), սնդիկի (II) օքսիդը, սնդիկի (II) սուլֆատը, սնդիկի (II) նիտրատը, կինաբարը եւ սնդիկի սուլֆիդը.

3) սնդիկային թափոններ՝ նյութեր կամ առարկաներ, որոնք՝

ա. բաղկացած են սնդիկից կամ սնդիկի միացություններից կամ

բ. պարունակում են սնդիկ կամ սնդիկի միացություններ կամ

գ. աղտոտված են սնդիկով կամ սնդիկի միացություններով:

Այս սահմանումը չի ներառում մակաբացման ու դատարկ ապարները եւ լցակույտերը, որոնք առաջանում են հանքարդյունահանման ընթացքում (բացառությամբ սնդիկի հիմական արդյունահանման), եթե դրանք չեն պարունակում սնդիկ եւ սնդիկի միացություններ այն քանակությամբ, որը գերազանցում է սահմանված այն շեմային արժեքները, որոնք կընդունի Կոնվենցիայի Կողմերի համաժողովը լրացուցիչ հավելվածով.

4) սնդիկի հավելիչով արտադրանք՝ արտադրանք կամ արտադրանքի բաղադրիչ, որը պարունակում է սնդիկ կամ սնդիկի միացություն, որն ավելացվել է կանխամտածված.

5) սնդիկի հիմական արդյունահանում՝ երբ հիմական արդյունահանվող նյութը սնդիկն է.

6) սնդիկի գործածություն՝ ցանկացած գործողություն կամ միջոցառում, որը կատարվում է սնդիկի արտադրության, օգտագործման, պահման, փաթեթավորման, փոխադրման, իրացման, շրջանառությունից դուրսբերման, վերամշակման ընթացքում.

7) Կոնվենցիա՝ «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիա.

8) Կողմ՝ պետություն կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպություն, որը համաձայնել է, որ Կոնվենցիան իր համար պարտադիր ուժ ունենա, եւ որի համար Կոնվենցիան ուժի մեջ է մտել.

9) լիազոր մարմին՝ «Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» օրենքով Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրվող եւ օգտագործվող վտանգավոր քիմիական նյութերի եւ թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման պայմանների ապահովման ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող եւ իրականացնող պետական կառավարման համակարգի մարմին:

ԳԼՈՒԽ 2

ՍՆԴԻԿԻ, ՍՆԴԻԿԻ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՍՆԴԻԿԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ՍՆԴԻԿԻ ՀԱՎԵԼԻՉՈՎ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԷԿՈԼՈԳԻԱՊԵՍ ԱՆՎՏԱՆԳ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 4. Կառավարության լիազորությունները սնդիկի, սնդիկի միացությունների, սնդիկային թափոնների եւ սնդիկի հավելիչով արտադրանքի էկոլոգիապես անվտանգ կառավարման պայմանների ապահովման ոլորտում

1. Սնդիկի, սնդիկի միացությունների, սնդիկային թափոնների եւ սնդիկի հավելիչով արտադրանքի էկոլոգիապես անվտանգ կառավարման պայմանների ապահովման ոլորտում Կառավարության լիազորություններն են՝

1) Հայաստանի Հանրապետությունից արտահանման եւ Հայաստանի Հանրապետություն ներմուծման համար արգելված սնդիկի հավելիչով արտադրանքի ցանկի սահմանումը.

2) Հայաստանի Հանրապետությունից սնդիկի արտահանման կարգի սահմանումը.

3) Հայաստանի Հանրապետություն սնդիկի ներմուծման կարգի սահմանումը.

4) սնդիկով կամ սնդիկի միացություններով աղտոտված վայրերը հայտնաբերելու եւ դրանք գնահատելու ռազմավարության հաստատումը:

Հոդված 5. Լիազոր մարմնի լիազորությունները սնդիկի, սնդիկի միացությունների, սնդիկային թափոնների եւ սնդիկի հավելիչով արտադրանքի էկոլոգիապես անվտանգ կառավարման պայմանների ապահովման ոլորտում

1. Սնդիկի, սնդիկի միացությունների, սնդիկային թափոնների եւ սնդիկի հավելիչով արտադրանքի էկոլոգիապես անվտանգ կառավարման պայմանների ապահովման ոլորտում լիազոր մարմնի լիազորություններն են՝